ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հուլիսի 2021 թվականի №---Ա
ք. Երևան

«ԶԱՆԳԵԶՈՒՐ-95» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի №476Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի դեկտեմբերի 23-ի №476Ա որոշմամբ երկարաձգվել է «ԶԱՆԳԵԶՈՒՐ-95 արտադրական կոոպերատիվին (այսուհետ՝ Կոոպերատիվ) տրամադրված Շինուհայր» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0191 լիցենզիայի ժամկետը, իսկ որոշման 3-րդ կետով Կոոպերատիվին պարտավորեցվել է վեցամսյա ժամկետում՝ մինչև 2021 թվականի հունիսի 27-ը, Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած Կայանի ճշգրտված ելքերով և ջրառի ու ջրահեռացման նիշերով նախագիծը (նախագծի փոփոխությունները)՝ դրական փորձագիտական եզրակացություններով, իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում համապատասխան հիմնավորումներ, ինչը Կոոպերատիվի կողմից չի ներկայացվել,

բ) Կոոպերատիվը 2021 թվականի հունիսի 23-ի №7 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել Կայանի նախագծային փաստաթղթեր, այդ թվում «ԷԿՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի հունիսի 25-ի №83/Հ գրությամբ տրված փորձագիտական եզրակացություն, հայտնելով սակայն, որ փորձաքննությունը իրականացվել է մասնակի, ենթակա է պարզման այդ նախագծի շրջակա միջավայրի

ազդեցության, ինչպես նաև համալիր փորձաքննության անցկացման կամ դրա անհրաժեշտության բացակայության հարցը, հետևաբար խնդրել է Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի №476Ա որոշման 3-րդ կետով սահմանված ժամկետը երկարաձգել ևս 6 ամսով,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի հունիսի 30-ից Կոոպերատիվի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ 2020 թվականի դեկտեմբերի 23-ի №476Ա որոշման 3-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարույթի շրջանակում Կոոպերատիվը 2021 թվականի հուլիսի 8-ի և 13-ի գրություններով ըստ էության ընդունել է թույլ տրված խախտումը, կրկին անգամ խնդրելով նախագծի փորձաքննությունն իրականացնելու նպատակով ևս վեց ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի №476Ա որոշման 3-րդ կետով սահմանված ժամկետը,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Կոոպերատիվը խախտել է 2020 թվականի դեկտեմբերի 23-ի №476Ա որոշման 3-րդ կետի պահանջը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի №476Ա որոշման 3-րդ կետի պահանջի խախտման համար Կոոպերատիվին նախազգուշացնել:

2. Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի դեկտեմբերի 27-ի №214Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և «ԶԱՆԳԵԶՈՒՐ-95» արտադրական կոոպերատիվին նախազգուշացնելու մասին» №476Ա որոշման 3-րդ կետում «վեցամսյա» բառը փոխարինել «մեկ տարվա» բառերով:

3. Կոոպերատիվին՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կոոպերատիվին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ 2-րդ կետի, որի գործողությունը տարածվում է 2021 թվականի հունիսի 27-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2021թ.